

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱԲ-ԲՄԱՇՁԲ-22/4**

ք. Արմավիր

«28» հոկտեմբերի 2022թ.

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դ. Խուդաթյանի, որը գործում է ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Խլղաթյան Շին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Խլղաթյանի, որը գործում է «Խլղաթյան Շին» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **392 օրացուցային օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել՝ նրանից հետո ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքի թերությունների պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:



3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուին իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուին պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:


3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով



(գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **250296000 (երկու հարյուր հիսուն միլիոն երկու հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ, որից 41716000 (քառասունմեկ միլիոն յոթ հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուին իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:



5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)


Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման ընդամենը հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն



միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:


8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նախատեսված ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տնօրենքի



ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արմավիրի համայնքապետարան
Ք. Արմավիր, Հանրապետության 32
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ՝ 900332201087
ՀՎՀՀ՝ 04440427
Համայնքի ղեկավար՝

Դ. Խուլաթյան՝

(ստորագրություն)

Կ.Տ.



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Խլղաթյան Շին» ՍՊԸ
Ք. Արմավիր, Թումանյան փ., տ. 82
«Ակբաբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 220033332226000
ՀՎՀՀ՝ 04422512
Տնօրեն Մ. Խլղաթյան

Մ. Խլղաթյան՝

(ստորագրություն)

Կ.Տ.



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*


ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ ՀՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Գ/Գ	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը հազար դրամ	Ընդհանուր արժեքը հազար դրամ	Տեսակարար կշիռ
1	2	3	4		6	7
Քանդման աշխատանքներ						
1	Ց/ավազե շերտի քանդում	մ2	44,1	1	44,1	0,13
2	Հատակների բետոնի շերտի քանդում 100 մմ	մ3	4,41	8	35,28	
3	Գաջե սվաղի քանդում պատերից	մ2	91	0,8	72,8	
4	Գաջե սվաղի քանդում առաստաղից	մ2	44,1	0,8	35,28	
5	Մետաղական ճաղավանդակների ապամոնտաժում	մ	5,9	2	11,8	
6	Շին.աղբի հավաքում, բարձում և տեղափոխում դեպի թափոնակույտ Յկմ	տ	14,34	4,4	63,6696	
	Ընդամենը				262,930	
7	Ց/ավազե շերտի քանդում	մ2	495,8 4	1,5	743,76	1,38
8	Հատակների բետոնի շերտի քանդում 100 մմ	մ3	8,5	7	59,5	
10	Գաջե սվաղի քանդում պատերից	մ2	195	1	195	
11	Ց/Ավազե սվաղի քանդում պատերից	մ2	78,5	1	78,5	
12	պատերից կերամիկական սալիկների քանդում	մ2	78,5	1	78,5	
13	Կահույկի առաստաղի քանդում	մ2	45,6	1	45,6	
14	առաստաղի մաքրում հին ներկից	մ2	35,45	1	35,45	
15	Գաջե սվաղի քանդում առաստաղից	մ2	35,45	1	35,45	
16	Մետաղական ճաղավանդակների ապամոնտաժում	մ	6,6	3	19,8	
17	Փայտե դռների ապամոնտաժում	մ2	40,74	2	81,48	
18	մետաղապլաստե դռների ապամոնտաժում	մ2	10,1	2	20,2	
19	Երկաթից դռների ապամոնտաժում	մ2	7,45	3	22,35	
20	Փայտե պատուհանների ապամոնտաժում	մ2	69,22	1,5	103,83	



21	մետաղապլաստե պատուհանների ապամոնտաժում	մ2	25,74	1	25,74
22	Հատակների բետոնի շերտի քանդում	մ3	11,79	6	70,74
23	հատակներից կերամիկական սալիկների քանդում	մ2	141,8	0,7	99,26
24	Փայտե մանրահատակի քանդում	100մ2	1,626	30	48,78
25	Լամինատե հատակի քանդում	100մ2	0,531	20	10,62
26	հատակներից պրեսգրանիտե սալիկների քանդում	մ2	20,4	0,7	14,28
27	Չուգարանակոնքերի ապամոնտաժում	լրակազ մ	5	4	20
28	Լվացարանների ապամոնտաժում	լրակազ մ	5	3,5	17,5
29	100մմ հաստ. միջնորմերի քանդում	մ3	42,9	3	128,7
30	Շին.աղբի հավաքում, բարձում և տեղափոխում դեպի թափոնակույտ Յկմ	տ	206,4	4,4	916,416
	Ընդամենը				2871,456
31	Ց/ավազե շերտի քանդում	մ2	602,8	1	602,8
32	Պատերի մաքրում հին ներկից	մ2	221	0,1	22,1
33	Գաջե սվաղի քանդում պատերից	մ2	221	0,9	198,9
34	Ց/Աավազե սվաղի քանդում պատերից	մ2	91	1	91
35	պատերից կերամիկական սալիկների քանդում	մ2	91	1	91
36	Կախովի առաստաղի քանդում	մ2	44,1	1	44,1
37	առաստաղի մաքրում հին ներկից	մ2	39,1	0,1	3,91
38	Գաջե սվաղի քանդում առաստաղից	մ2	39,1	1	39,1
39	ճակատային վիտրաժի ապամոնտաժում	մ2	30,6	3	91,8
40	Մետաղական ճաղավանդակների ապամոնտաժում	մ	8,2	2	16,4
41	Փայտե դռների ապամոնտաժում	մ2	49,56	2	99,12
42	Փայտե պատուհանների ապամոնտաժում	մ2	128,9	1	128,9
43	հատակներից կերամիկական սալիկների քանդում	մ2	136,3	1	136,3
44	Փայտե մանրահատակի քանդում	100մ2	4,665	50	233,25
45	Չուգարանակոնքերի ապամոնտաժում	լրակազ մ	10	2,7	27
46	Լվացարանների ապամոնտաժում	լրակազ մ	10	2,7	27
47	100մմ հաստ. միջնորմերի քանդում	մ3	43,1	3	129,3
48	Շին.աղբի հավաքում, բարձում և տեղափոխում դեպի թափոնակույտ	տ	136,6	3	409,8
	Ընդամենը				2391,780


1,15




Տանիքի Զանդման աշխատանքներ

49	Տանիքի ասբոշիֆերի ծածկույթի ապամոնտաժում,	մ2	640	0,6	384
50	փայտե կոնստրուկցիաների ապամոնտաժում	մ3	21,1	6	126,6
51	Զրատար խողովակների ապամոնտաժում	մ	78	0,4	31,2
52	Ե/բ օդատար հորանների քանդում	մ3	6,7	6	40,2
53	Շին.աղբի հավաքում, բարձում և տեղափոխում դեպի թափոնակայան	տ	9,7	3	29,1
	Ընդամենը				611,100
Հիմնանորգման աշխատանքներ					
Ե/Բ հիմքերի ուժեղացում					
	Հանգույց Հ1				
54	Ե/Բ միաձույլ Հանգույց Հ1 իրականացում B-25 դասի բետոնով	մ3	1,4	75	105
55	Ամրան A500C դասի	տ	0,167	450	75,15
56	Ամրան A240 դասի	տ	0,069	450	31,05
	Հանգույց Հ2				0
57	Ե/Բ միաձույլ Հանգույց Հ2 իրականացում B-25 դասի բետոնով	մ3	3,2	75	240
58	Ամրան A500C դասի	տ	0,418	450	188,1
59	Ամրան A240 դասի	տ	0,14	450	63
	Հանգույց Հ3				0
60	Ե/Բ միաձույլ Հանգույց Հ3 իրականացում B-25 դասի բետոնով	մ3	1,44	75	108
61	Ամրան A500C դասի	տ	0,216	450	97,2
62	Ամրան A240 դասի	տ	0,055	450	24,75
63	Անցքերի շաղափում բետոնե հիմքերում Ø24սմ L=500սմ	հատ	268	0,4	107,2
64	Պոլիմեր ցեմենտե շաղափի ներարկում անցքերում	մ3	0,01	1000	10
	Քանդված միաձույլ հատակների վերանորոգում				0
65	Բազալտե խճե շերտ տոփանումով	մ3	8,5	8	68
66	Ե/Բ միաձույլ հատակի իրականացում B-12,5 դասի բետոնից	մ3	8,5	75	637,5
67	Փովածքի շերտերի ամրանավորում	տ	0,185	450	83,25
68	Մետ, ցանց 5Bp1 150*150	մ2	85	0,97	82,45
	Ընդամենը				1920,650
Մետաղական կապեր					
69	Մետաղական կապ ՄԿ-3 կոնստրուկցիաներ 52 հատ	տ	7,795	250	1948,75
70	Երկտավր N22	տ	7,114	770	5477,78
71	Մետաղե թիթեղ 12սմ	տ	0,494	650	321,1

0,92



72	Մետաղե թիթեղ 10մմ	տ	0,187	650	121,55
73	Մետաղական կապ ՄԿ-4 կոնստրուկցիաներ 28 հատ	տ	2,826	250	706,5
74	Անկյունակ L=80x80x7	տ	1,431	750	1073,25
75	Անկյունակ L=63x63x6	տ	0,05	950	47,5
75	Մետաղե թիթեղ 8մմ	տ	0,845	650	549,25
76	Ամրան A500C դասի	տ	0,312	550	171,6
77	Մետաղե թիթեղ 10մմ	տ	0,187	650	121,55
78	Մետաղական կապ ՄԿ-5 կոնստրուկցիաներ 12 հատ	տ	1,112	250	278
79	Անկյունակ L=80x80x7	տ	0,613	750	459,75
80	Անկյունակ L=63x63x6	տ	0,022	850	18,7
81	Մետաղե թիթեղ 8մմ	տ	0,362	650	235,3
82	Ամրան A500C դասի	տ	0,072	550	39,6
83	Մետաղե թիթեղ 10մմ	տ	0,043	650	27,95
84	Մետաղական կապ ՄԿ-6 կոնստրուկցիաներ 14 հատ	տ	1,49	250	372,5
85	Անկյունակ L=80x80x7	տ	0,953	750	714,75
86	Անկյունակ L=63x63x6	տ	0,049	750	36,75
87	Մետաղե թիթեղ 8մմ	տ	0,353	650	229,45
88	Ամրան A500C դասի	տ	0,084	550	46,2
89	Մետաղե թիթեղ 10մմ	տ	0,05	650	32,5
90	Մետաղական կապ ՄԿ-7 կոնստրուկցիաներ 6 հատ	տ	0,638	250	159,5
91	Անկյունակ L=80x80x7	տ	0,409	150	61,35
92	Անկյունակ L=63x63x6	տ	0,021	950	19,95
93	Մետաղե թիթեղ 8մմ	տ	0,151	650	98,15
94	Ամրան A500C դասի	տ	0,036	550	19,8
95	Մետաղե թիթեղ 10մմ	տ	0,022	650	14,3
96	Մետաղական կոնստրուկցիաների ներկում հակակոռոզիոն ներկով	100մ2	3,327	200	665,4
97	անցքերի շաղափում Ø22 մմ L=250մմ	հատ	672	0,99	665,28
98	Պոլիմեր ցեմենտե շաղախի ներարկում անցքերում	մ3	0,011	2000	
	Ընդամենը				
ԾԱՏԿԻ ՍԱԼԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ					
99	Կլորավոր սալերում անցքեր բացում 160x60մմ	100հատ	33,98	15	
100	Կլորավոր սալերում անցքերի բետոնացում B-20 դասի թեթև բետոնով	մ3	10,9	150	
101	Ծածկերի ուժեղացում միաձուլվ B-20 դասի թեթև երկաթբետոնով, տեղադրումը վերևից	մ3	76,4	150	



102	Ամրան A500C դասի	տ	0,586	550	322,3
103	Ամրան A240	տ	0,641	550	352,55
104	Կլորավոր սալերում օդափողության անցքեր բացում 200x1400մմ	100հատ	0,04	1000	40
105	Կլորավոր սալերում օդափողության անցքեր բացում 200x1000մմ	100հատ	0,08	1000	80
106	Կլորավոր սալերում օդափողության անցքեր բացում 200x800մմ	100հատ	0,04	1000	40
107	Ամրան A500C դասի	տ	0,311	550	171,05
	Սյուների տորկրետ սվաղ				0
108	Մետաղական ցանց ØBP1 , բջիջը 150x150մմ	տ	0,764	900	687,6
109	Մետաղական ցանց ØBP1 , բջիջը 150x150մմ	վ2	352	3	1056
110	Սյուներ ճնշումային տորկրետացում B-20 դասի բետոնով 50մմ	վ2	352	6	2112
	Սյուների ուժեղացման սվաղ				0
	ՄՄ-1				0
111	անցքերի շաղափում Ø28 մմ L=500մմ	հատ	56	1	56
112	Պոլիմեր ցեմենտե շաղախի ներարկում անցքերում	վ3	0,007	800	5,6
113	անցքերի շաղափում Ø22 մմ L=150մմ	հատ	364	1,5	546
114	Պոլիմեր ցեմենտե շաղախի ներարկում անցքերում	վ3	0,007	800	5,6
115	Սյուների ուժեղացում, Ամրան A500C դասի	տ	0,419	550	230,45
116	Սյուների ուժեղացում, Անկյունակ 90°90°7	տ	1,761	750	1320,75
117	Սյուների ուժեղացում, Թիթեղ	տ	0,58	550	319
	ՄՄ-2 12 հատ				0
118	անցքերի շաղափում Ø28 մմ L=500մմ	հատ	96	0,5	48
119	Պոլիմեր ցեմենտե շաղախի ներարկում անցքերում	վ3	0,012	900	10,8
120	անցքերի շաղափում Ø22 մմ L=150մմ	հատ	312	0,5	156
121	Պոլիմեր ցեմենտե շաղախի ներարկում անցքերում	վ3	0,007	450	3,15
122	Սյուների ուժեղացում, Ամրան A500C դասի	տ	0,479	550	263,45
123	Սյուների ուժեղացում. Անկյունակ 90°90°7	տ	2,264	750	1698
124	Սյուների ուժեղացում. Թիթեղ	տ	0,498	550	273,9
	ՄՄ-3 20 հատ				0
125	անցքերի շաղափում Ø28 մմ L=500մմ	հատ	160	0,5	80
126	Պոլիմեր ցեմենտե շաղախի ներարկում անցքերում	վ3	0,02	500	10
127	անցքերի շաղափում Ø22 մմ L=150մմ	հատ	780	0,4	312
128	Պոլիմեր ցեմենտե շաղախի ներարկում անցքերում	վ3	0,02	500	10



129	Սյուների ուժեղացում. Ամրան A500C դասի	տ	0,998	550	548,9	
130	Սյուների ուժեղացում. Անկյունակ 90°90°7	տ	2,264	750	1698	
131	Սյուների ուժեղացում. Թիթեղ	տ	0,498	650	323,7	
	Ընդամենը				26385,500	
Պատի բացվածքի ավելացում						
132	Պատերի քանդում կտրումով	մ3	4,3	40	172	
133	Անցքերի շաղափում D=12մմ L=300մմ	հատ	37	6	222	
134	Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տ	0,624	1000	624	
135	Հեծան պողպատե, տաշտաձև պրոֆիլի N 12	մ	23,03	43	990,29	1,51
136	Անկյունակ պողպատե 75x75x5մմ	մ	442	2	884	
137	Պողպատ շերտավոր	տ	0,119	2000	238	
138	Ամրան A500C դասի 10մմ	տ	0,018	1000	18	
	Ընդամենը				3148,290	
ԲԱՅՎԱԾԵՐԻ ՓԱԿՈՒՄ						
139	Անցքերի շաղափում D=8մմ L=150մմ	հատ	40	0,2	8	
140	Պատերի շար ցեմենտավազե բլոկ 200x200x400	մ3	1,8	30	54	0,05
141	Պատի շարվածքի ամրանավորում	տ	0,054	400	21,6	
142	Ամրան A500C դասի	տ	0,054	400	21,6	
	Ընդամենը				105,200	
1	Ծածկերի մոնտաժում Պրոֆիլավոր, ցինկապատ թիթեղից KՌ-25-0,5մմ KՌ-25-0,50մմ	100մ2	6,49	700	4543	
2	Փայտե չորսու 50x50	մ3	3,25	300	975	
3	Գագաթի և ձեռնալուսամուտների գոգնոցների ցինկապատ թիթեղ 0,50մմ	մ2	77,5	4,99	386,725	
5	Ձեղնալուսամուտի տեղադրում	հատ	8	100	800	
6	Ձեղնահարկի պատուհանի թիթեղապատում պրոֆիլավոր թիթեղ ԿՊ -21 - 0.55 մմ ցինկապատ	մ2	19,2	10	192	
7	Ձեղնահարկի պատուհանի թիթեղապատում հարթ թիթեղ 0,55մմ	մ2	21,6	10	216	
8	Ձագարների և Ջրահեռացման խողովակների տեղադրում ցինկապատ հարթ թիթեղից՝ 0,50 մմ., Փ120	կոմպ	14	29	406	6,2
9	ցվիզ և ջրհորդան	100մ	1,85	750	1387,5	
10	Տոլ երկշերտ	100մ2	0,58	15	8,7	
11	Պենոպլաստ	մ2			0	
12	Տանիքի փայտյա կոնստրուկցիաներ	մ3	9,47	180	1704,6	
13	Կավարամածի հակահրդեհային պաշտպանություն	մ2	649	3	1947	
14	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն	մ3	9,47	40	378,8	



	Ընդամենը				12945,325	
Պատուհաններ. դռներ						
15	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, բացվող	մ2	108,7 1	45	4891,95	7,32
16	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, չբացվող	մ2	71,85	45	3233,25	
17	Ցեմենտավազե հարթեցնող շերտի 30մմ հաստությամբ	100մ2	0,345	300	103,5	
18	Պլասմասե պատուհանագոգեր 300մմ	գ.մ	115,1	6	690,6	
19	Արտաքին դռներ ալյումինե բլոկով սպիտակ 60մմ ջերմակամուրջով ապակեփաթեթով հաստ 4+4 մմ պրոֆիլով /արտերկիր/	մ2	25,54	9	229,86	
20	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ	մ2	74,55	50	3727,5	
21	Դռներ մետաղական	տ	0,264	2500	660	
22	Ճակատային վիտրաժ մետաղական պրոֆիլներով	մ2	30,6	24	734,4	
23	մետաղապլաստե վիտրաժ	մ2	22,95	43	986,85	
	Ընդամենը				15257,910	
Հատակներ						
	ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿ					
	ՊՐԵՍԳՐԱՆԻՏԵ ՀԱՏԱԿ					
24	Զրամեկուսացում ռուբեռոիդով 1 շերտ	մ2	189,3 1	0,5	94,655	4,13
25	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	100մ2	1,893 1	250	473,275	
26	Պրեսգրանիտե սալիկ 600x600մմ	100մ2	1,893 1	750	1419,825	
27	Պրեսգրանիտե շրիշակի h=10սմ	100մ	1,925	90	173,25	
	ՎԻՆԻԼԱՅԻՆ ՀԱՏԱԿ					
28	Զրամեկուսացում ռուբեռոիդով 1 շերտ	մ2	251,3 9	0,5	125,695	
29	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	100մ2	2,513 9	250	628,475	
30	Վինիլային հատակ 3.0 մմ /ախափմբի սոսիսձի շրիշակի և լարի հետ միասին/	100մ2	2,514	2000	5028	
	ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ՀԱՏԱԿ					
31	Զրամեկուսացում ռուբեռոիդով 1 շերտ	մ2	57,6	0,5	28,8	5,09
32	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	100մ2	0,576	250	144	
33	Կերամիկական սալ 300x300մմ	100մ2	0,576	880	506,88	
	Ընդամենը				8622,855	
	ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿ					
	ՊՐԵՍԳՐԱՆԻՏԵ ՀԱՏԱԿ					
34	Զրամեկուսացում ռուբեռոիդով 1 շերտ	մ2	131,5 9	0,5	65,795	
35	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	100մ2	1,315 9	250	328,975	




36	Պրեսգրանիտե սալիկ 600x600մմ	100մ2	1,315 9	750	986,925	
37	Պրեսգրանիտե շրիշակ h=10մմ	100մ	1,391	90	125,19	
	ՎԻՆԻԼԱՅԻՆ ՀԱՏԱԿ				0	
38	Զրամեկուսացում ռուբեռոիդով 1 շերտ	մ2	412,0 1	0,5	206,005	
39	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	100մ2	4,120 1	250	1030,025	
40	Վիսկոլային հատակ 3.0 մմ /սախափմքի սոսինձի շրիշակի և լարի հետ միասին/	100մ2	4,12	1700	7004	
	ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ՀԱՏԱԿ				0	
41	Զրամեկուսացում ռուբեռոիդով 2 շերտ	մ2	70,87	1	70,87	
42	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	100մ2	0,708 7	250	177,175	
43	Կերամիկական սալ 300x300մմ	100մ2	0,708 7	880	623,656	
	Ընդամենը				10618,616	
ՓՔԱՊԵՌԼԻՏԵ ԲԱՐՁԻԿՆԵՐ 100ՄՄ ՀԱՍՏ.ԼՅՎԱԾ ՋՐԱԿԱՅՈՒՆ						1,33
ՊԱՐԿԻ ՄԵՋ						
44	Գոլորշիամեկուսիչ թաղանթ	մ2	642,8	1,3	835,64	
45	Փքապեղիտից բարձիկներ 100մմ 642,80 m2	մ3	64,28	30	1928,4	
	Ընդամենը				2764,040	
ԳԻՊՍԱՍՏՎԱՐԱԹՂԹԵ ՄԻՋՆՈՐՄՆԵՐ						6,0
